ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ

7 հարցերի կարճ պատասխաններ

1 Որքա՞ն է ամենամյա արձակուրդի տևողությունը Հայաստանի Հանրապետությունում:

Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը **հնգօրյա** աշխատանքային շաբաթվա դեպքում **20 աշխատանքային օր է,** իսկ **վեցօրյա** աշխատանքային շաբաթվա դեպքում՝ **24 աշխատանքային օր:**



2 Ե՞րբ կարող է աշխատողը օգտվել իր ամենամյա արձակուրդից:

Աշխատողը կարող է օգտվել ամենամյա արձակուրդից աշխատանքային տարվա ընթացքում՝ համաձայնեցնելով այն գործատուի հետ: **Աշխատանքային տարին սկսվում է** աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման հրամանում նշված օրն աշխատանքի անցնելու օրվանից և **ավարտվում է** հաջորդ օրացուցային տարվա համապատասխան ամսին և ամսաթվին:

Եթե աշխատողը երկուսուկես **աշխատանքային տարի անընդմեջ խուսափում է կամ հրաժարվում է իրեն հասանելիք ամենամյա արձակուրդի կամ դրա մի մասի օգտագործումից, ապա տվյալ աշխատողին ամենամյա արձակուրդ տրամադրելու ժամանակահատվածը **որոշում է գործատուն:***

3 Կարո՞ղ է ամենամյա արձակուրդը բաժանվել մասերի:

Այո, գործատուի և աշխատողի համաձայնությամբ ամենամյա արձակուրդը կարող է բաժանվել մասերի, սակայն մասերից մեկը պետք է լինի **առնվազն 10 աշխատանքային օր՝** հնգօրյա աշխատանքային շաբաթի դեպքում, և **առնվազն 12 աշխատանքային օր՝** վեցօրյա աշխատանքային շաբաթի դեպքում:



4 Արդյո՞ք ամենամյա արձակուրդը վճարվում է:

Այո, ամենամյա արձակուրդի ընթացքում աշխատողը ստանում է իր միջին աշխատավարձը:

5 Կարո՞ղ է արդյոք արձակուրդի փոխարեն գումար տրամադրվել:

Ոչ, արձակուրդը փոխանակման ենթակա չէ գումարով, բացառությամբ աշխատանքային հարաբերությունների դադարի դեպքում, երբ չօգտագործված արձակուրդի համար վճարվում է փոխհատուցում:



6 Արդյո՞ք գործատուն կարող է կանչել աշխատողին աշխատանքի արձակուրդի ընթացքում:

Միայն աշխատողի **համաձայնությամբ:** Արձակուրդի չօգտագործված մասը տեղափոխվում է և տրվում է ավելի ուշ՝ աշխատողի համաձայնությամբ:

7 Ի՞նչ է տեղի ունենում, երբ աշխատողը հիվանդանում է արձակուրդի ընթացքում:

Եթե արձակուրդի ընթացքում աշխատողը հիվանդանում է և ներկայացնում է հիմնավորող բժշկական փաստաթուղթ, ապա այդ օրերը չեն համարվում արձակուրդային, և արձակուրդը պետք է համապատասխանաբար երկարաձգվի կամ տեղափոխվի:

Իրավաբանական կլինիկայի կամ Ձեր իրավունքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝

https://www.ufar.am/services/clinique-juridique